

բայց մահը ինձի բնաւ ահռելի բան մը չէ հիմա . իմ ամեն մտածութիւնս առ Աստուած կը դիմէ, և հոգիս Աստուծոյ տեսոյն կը ցանկայ :

— Իրաւցընէ հիմա մեռնի պիտոր, յոյս մը չէ մնացեր ապրելուն, կ'ըսէր ցաւազին հայրը վիրաբուժին ձեռքը սեղմելով :

— Որդիդ իբր բարի քրիստոնեայ մը մեռնի պիտոր, և այս մէկ մեծ մխիթարութիւն մըն է բարեսիրտ հօր մը, պատասխանեց վիրաբուժը, իրեն ալ սիրտը լեցուած :

— Ո՛վ Աստուած, շատ ծանրացած է քու ձեռքդ իմ վրաս . Ալպերտ կը մեռնի և Օսքար է զանիկայ մեռցնողը : Ո՛վ Յիսուս, իմ որդիքս ինչ եղան . ո՛ր կրնամ ես մխիթարութիւն գտնել անձ կուժիւնս փարատելու :

— Միայն Աստուծոյ քով, ցած ձայնով պատասխանեց Ալպերտ իր հօրը . և մաքուր որոշ ձայնով մը նորէն թողութիւն կու տար եղբօրը, աղօթելով անոր համար և յետոյ խոնջ գլուխը բարձին վրայ հանգչեցուց : « Ահա հասեր է իմ վրաս գիշերը, ո՛վ Յիսուս, հասիր ինձի օգնութեան » . զայս նուազ ձայնով մը արտաբերելով աւանդեց հոգին :

Այն ատեն թշուառ հայրը իր սիրելոյն նշխարէն զատուիլ չէր ուզեր, անոր համար քովը եղողներն ալ հոն մնացին որ զինքը մխիթարեն . հսկմամբ և աղօթքով անցուցին նոյն աւուր մնացորդը և ամբողջ գիշերը :

Միւս առաւօտ աշխատաւորը որ մայրաքաղաքին մօտիկ տեղ մը թումբ չինելու կ'աշխատէին, ջրոյ միջէն խեղդուած մարդու մարմին մը դուրս քաշեցին, որ էր նա ինքն Փլայն վարժապետը : Նա իր հատուցումը փութով գտեր էր, և իշխանին բարկութենէն ճողորկելու համար ինքը զինքը գետ նետեր էր : Եղկելին մահկանացւոյ մը ձեռքէն ազատելու համար Աստուծոյ ահեղ ատենին դիմաց կ'ելլար անապաշխար : Անշուշտ ինքն ալ ոմանց պէս այն բանին կը հաւատար, թէ այս կենացս

կայծն, մարդու հոգին, մարմնոյն հետ գերեզմանին մէջ ապականելով կը ցնդի : Այն, արդեօք ինչպէս այս իր սխալը ճանչցած է հոն :

ՎԵՐՁ

Բարոյակիսն և քաղաքակիսն տնտեսառարիւն :

(Տես էրես 230)

Հարստութիւնն, ինչպէս որ ձեզի բնի, կը կայանայ այն ամենայն բանին վրայ որ մարդու կարևոր է՝ օգտակար կամ հաճոյական : Հարուստ ըլլալ ըսելն ուրեմն այս բաներն առատապէս ստանալ կամ հայթհայթել ըսել է :

— Ըստ այսմ, ըսաւ այն ատեն Միքայէլ, հարուստ ըլլալ՝ շատ ստակ ունենալն է . վասն զի երբ մէկը շատ ըստակ ունի՝ ամեն փափաքածը կրնայ ճարել :

— Անտարակոյս, Միքայէլ, հարուստ ենք երբ շատ ստակ ունինք . սակայն հարուստ ըլլալու միակ կերպն առ չէ : Միթէ շատ կալուածներ ունեցող երկրատէրը հարուստ չէ, թէպէտ և կարելի է որ նիւթական ստակ չունենայ : Միթէ պարտք չունեցող վաճառականը՝ որուն շտեմարանները վաճառքով լի են՝ հարուստ չէ, թէպէտ և կարելի է որ գործին մէջ ստակ չունենայ : Տարակոյս չկայ որ հարուստ են . վասն զի իրենց ունեցածովը կրնան ճարել ինչ որ պէտք ունին, միայն թէ ստիպեալ են արծաթ ստակի փոխելու ունեցածնին, որպէս զի կարենան ուղածնին գնել :

Ստակը կարևոր միջնորդ ըլլալով տուրեառութեանց՝ կը հետեցուի թէ հարստութիւնը ստակի վրայ կը կայանայ . ընդհակառակն կարելի է հարուստ ըլլալ առանց ստակի . և ինչպէս ոմանց՝ նոյնպէս է նաև բազմութիւն ժողովրդոց նկատմամբ . ժողովուրդ մը կրնայ հարուստ ըլլալ ու քիչ ստակ ունենալ : Հարուստ է եթէ երկրագործութիւնն

իր մէջը ծաղկած է, ճարտարութիւնն ու արուեստները վարդապած, եթէ ունի առատապէս բնական կամ արուեստական բերքեր, եթէ ունի շատ ձեռագործներ, նաւեր, ճամբաներ, ջրանցքներ, վերջապէս ամենայն բան որ հանգրստութեան պատճառ է և պատճառ նաև արուեստից ու վաճառականութեան ծաղկելուն: Ասով է որ ինչուան հիմա Անգղիա աւելի հարուստ է քան զԳաղղիա՝ թէպէտ և երկրին մէջ քիչ ստակ ունի: Ընդհակառակն՝ շատ ստակ ունեցող ժողովուրդ մը կրնայ երբեմն աղքատ ըլլալ:

— Կարելի բան չէ, գոչեց Ժարլան:

— Ստոյգ է, Ժարլան: Ժողովուրդ մ'որ շատ ստակ ունի՝ բայց քիչ արուեստ ու ապրուստի քիչ միջոց՝ անդադար կ'աղքատանայ, վասն զի իր ըստակը օտարին կ'անցնի. ինչպէս որ այս բանս Սպանիոյ գլուխն եկաւ որ արուեստներէ զուրկ մնալով աղքատացաւ, Մէքսիկոյի ու Բերուի մետաղահանքերէն հանած ոսկւովն ու արծաթովն հանդերձ: Նոյն փորձանքը կու գայ հարուստներուն գլուխն ալ՝ եթէ սպառեն միշտ առանց միւս կողմանէ ալ արդիւնաբերելու. իրենց հարստութեամբն հանդերձ վերջապէս կը փճանան: Վասն զի մարդկանց՝ ինչպէս նաև ժողովրդոց համար հարստութիւն ստանալու ու պահպանելու միակ մէկ կերպ կայ:

— Որ է աշխատիլը, ըսաւ Ռափոյ:

— Վկայեցիր, և որ լուսադոյն է՝ այնպէս ալ ըրած ես. սակայն ըսածիդ վերայ անհրաժեշտ բան մ'ալ աւելցնեմ՝ ի լրումն. վասն զի կան մարդիկ որ կ'աշխատին ու չեն հարըստանար. պէտք է խնայողութիւն ընել կամ թէ ըսել, ամենայն դէպքէ սպառածէն աւելի ձեռք բերէ ու չահի: Եթէ օրինակ իմն, ամեն տարի չահածէդ ուտէիր՝ չէիր հարըստանար:

— Ստոյգ այնպէս է, Պ. Տիւրբէ:

— Ուստի ստացուածքդ աճեցաւ ըրած ամեն խնայմունքներովդ. նոյնպէս նաև անոնց ամենուն ալ որ ըրած ծախքերնէն աւելի կը չահին՝ ստացուածք-

նին ամեն տարի կ'աւելնայ: Եթէ աղղի մը մէջ այս կերպ շատ մարդիկ կան, շատ խնայողութիւն կ'ըլլուի բերոց, և երկրին ալ հարըստութիւնը այնչափ աւելի կը շատնայ: Քանի մը սերունդ ետքը՝ երկիրը մեծապէս հարըստացած կ'ըլլայ:

Ապագայ սերունդը առատապէս պիտի վայելեն ընկերութեան հիմնական ինչքը, աւելի դիւրութիւն պիտի ունենան աշխատելու, և ինչպէս որ աւելի ևս պիտի ստանան ու արդիւնաւորեն, վայելքն ալ խնայողութիւնն ալ դիւրագոյն ևս պիտի ըլլան իրենց համար:

Հարստութիւնն ստանալի է ուրեմն աշխատութեամբ և կը պահպանի խնայողութեամբ: Զուտակ մը կ'իյնայ կը կործանի՝ եթէ փոխանակ աշխատելու հօրը ձգած եկամուտէն աւելի կ'ուտէ: Կ'աղքատանայ նաև աղղ մ'ալ եթէ ճարտարագէտ ըլլալէն դադրի, եթէ շուայլութեանց ու ցոփութեանց տայ ինք զինքը, եթէ անշահ ծախքեր ընէ:

— Կ'իմանամ, ըսաւ այն ատեն Միքայէլ, թէ աղղ մը կը հարըստանայ՝ որչափ որ քաղաքացիք կը հարըստանան. բայց երբ երկրին հարըստութիւնը կը շատնայ՝ ամենայն քաղաքացւոց համար չէ չահը, վասն զի սեպհականութեան իրաւանց ուժովը՝ ինչք չեն բաժնուիր ամենուն մէջ. ուստի թէ և ինչք կ'աճին՝ այլ կ'ըլլան ոմանք որ ամենեկին վաստակ չեն ունենար. և ասոնք են իրենց ծնողացմէ ամենեկին ժառանգութիւն չընդունողները. վիճակնին իրենց հարցը վիճակէն աւելի թշուառ կ'ըլլայ, վասն զի բարեկեցութեան առ հասարակ դարգանալովը՝ չորս կողմանէ ամենուն հանդիստ վիճակը կը տեսնեն և իրենք չեն կրնար նոյնն ունենալ:

— Կը խաբուիս այսու, Միքայէլ. պիտի տեսնես թէ նոյն իսկ յամենայնէ գլուրկ եղողին համար ալ չահաւոր է բաղմահարուստ երկրի մէջ ծնանիլը. վասն զի թէպէտ և ընկերութեան ինչքն հաւասարապէս ամենայն քաղաքացեաց մէջ չի բաժնուի, իւրաքանչիւրին ինկած մասը միշտ համեմատական է ընկերու-

Թեան հարըստութեանը. բաց ասկէ՝ մարդս այնչափ աւելի բաղդ կրնայ ունենալ առաջ երթալու՝ որչափ աւելի ընկերութիւնն յառաջացեալ է՝ փորձով տեսնենք. եթէ աւելի հարուստ ըլլայիր՝ աւելի ալ ծախք կ'ընէիր. արդ ամենքն ալ քեզի պէս են. եթէ աւելի ունենալին՝ աւելի ծախք կ'ընէին։ Ուրեմն երբ երկիրն հարըստագոյն է՝ փոխանակ գետնախնձորի՝ հաց կ'ուտուի, և փոխանակ ջրոյ կամ ջրախառն գինւոյ՝ զուտ գինի կը խմուի. աւելի միս կ'ուտուի. աւելի փայտ ու ածուխ կը սպառուի. աւելի բուրդ, մետաքս ու թաւիչ կը գործածուի. ամենայն դը աւելի զգեստ ու հանգերձեղէն կ'ունենայ. ամենքը տրեխի տեղ կօշիկ կ'ունենան ու աղէկ տըներ՝ փոխանակ հիւղից. բարեկեցութեան համար շատ կարասիք կը գնեն, գիրքեր, գորգեր, փորագրեալ նկարներ. ալ ինչ գիտնամ. ամեն բան ինչ որ օգտակար է ու հանգստութեան պատճառ, ինչ որ ախորժելի է ու հաճոյական։

Արդ որովհետեւ այս ամեն բանը պէտք է չինել, որչափ աւելի գնողք ըլլան՝ այնչափ աւելի ալ գործ կը բացուի աշխատաւորաց, և շահ՝ որ զայնս արդիւնաւորելով կ'ունենան. և որ և իցէ բան որչափ որ դիւրաւ կը ծախուի՝ ածանալ կը ծախուի. աղքատք իրենց աշխատութենէն աղէկ շահ կ'ունենան. կ'ըմբռնեն հիմա թէ ինչպէս անոնք որ ըստ ամենայնի կարօտ են՝ կը փափաքին իրենց երկրին շատ հարուստ ըլլալը։

— Կ'ըմբռնեմ. բայց եթէ հարուստներուն աւելորդ ունեցածը աղքատներն ունենային, միշտ նոյնչափ քանակութիւն հարըստութեանց կ'ըլլար ու աղքատաց վիճակը լաւագոյն կ'ըլլար։

— Չեմ ուրանար թէ քանի մը նկատմամբ աղքատին համար ալ քիչ մը շահ կ'ըլլար։ Հարըստութեան լաւագոյն բաժանումն ցանկալի էր անշուշտ, մասնաւորապէս եթէ աղքատք կարենային աւելի ունենալ, առանց հարուստներուն ընչիցը նուազելուն. վասն զի հարուստէն առնել աղքատին տալու համար՝ կոպոպտել կ'ըլլար, զոր դու չէիր ուզեր

յանձն առնուլ, և որ դարձեալ շատ չէր աղէկցըներ աղքատաց վիճակը, վասն զի հարուստք բազմութիւն չեն. աչքդ չորս կողմդ դարձուր ու համիէ։ Ա՛լ աւելին ըսեմ. հարուստներուն ստակը աղքատաց մէջ բաժնելէն ետքը՝ ընդհանուր երկրին մէջ աւելի նուազ բարեկեցութիւն կ'ըլլար՝ նոյն իսկ աղքատաց համար։

— Անկարելի է, ըսին ոմանք։

— Եւ սակայն ամենապարզ բան է. նախ և առաջ ամենայն ժողովրդոց մէջ շատ մը մեծամեծ ձեռնարկութիւններ կան՝ որ հիմնական մեծամեծ ընչիւք կ'ըլլան, և հասարակաց օգտակար մեծամեծ աշխատութիւններ կան՝ որոնց կատարումը անկարելի է առանց մեծագումար դրամագլխոց օգնութեան, զոր հարուստներուն շատութեամբը միայն կարելի է ճարել։ Արդ յատկապէս այս մեծամեծ աշխատութիւններն են որ աղքի մը մէջ բարօրութեան զարգացումը ընդհանուր կը դիւրացընեն. որչափ աւելի քիչ ըլլան հարուստք՝ այնչափ նուազ կ'ըլլան այս աշխատութիւնք. վերցընենք զամենքը՝ բոլորովին կը հատնին այդ կերպ գործառնութիւնք։

Մեծատանց հարըստութեան նուազիւր աշխատութեան նուազելուն պատճառ կ'ըլլայ ուրիշ եղանակաւ։ Որովհետեւ ամենայն ինչ կրնան ընել, եթէ անոնց թիւը պակսեցընելու ըլլանք՝ կը նուազեցընենք անոնց գործաւորաց տըւած ամենայն աշխատութիւնը. անոնց տեղը կը բռնեն այնպիսի մարդիկ՝ որոնք աշխատեցընելու կամ գնելու տեղ իրենք իրենց համար կ'աշխատին։

Բաց ասկէ՝ շատ մը տեսակ նիւթեր կան՝ զորս միայն հարուստները կարող են գնելու. իրենցմէ ուրիշ ոչ դք կը գնէ։ Թող վերնան բոլորովին հարուստք՝ և ահա կերպ կերպ արուեստներ կը փճանան, վասն զի ալ ոչ դք անոնցմէ առաջ բերած արդիւնքները կրնայ գնել. և ահա ասիկ ուրեմն առանց աշխատութեան կը մնան այն ամենայն մարդիկ՝ որոնք այս նիւթերը ձեռակերտելու կը դբաղին։ Արդ այս շուայութեան ա-

րուեստներն են մասնաւորապէս գործաւորաց աղէկ շահ պատճառով: Բաւական չէ այսչափս. հարուստներն են աւելի շահեցնողները՝ նոյն իսկ երբ հասարակաց գործածութեան բաներ ալ կը գնեն, վասն զի ամեն բանի կրկին գին կու տան՝ քան ինչ որ աղքատները: Այս բանս այնպէս ճշմարիտ է որ քաղքի մը այս նիշ փողոցին մէջ որ հարուստներուն թաղն է՝ մի և նոյն նիւթը աւելի սուղ կը ծախուի՝ քան զմիւս թաղը՝ ուր աղքատք կը բնակին: Հարուստք սուղ սուղ կը գնեն ազնիւ ընդեղէններ, ընտիր պտուղներ ու բարեհամ գինիներ և աժողէք ունեցող ուրիշ նիւթեր, զորս աղքատք չեն գներ կամ թէ սովորական իրաց պէս կը գնեն, ի մեծ ֆրաս անոնց՝ որոնք նեղութեամբ զանոնք հասուցեր են:

Հարուստք կ'օգնեն նաև աղքատաց բարեկեցութեանը՝ արուեստից զարգացմանը պատճառ ըլլալով: Ամենայն նոր բան մեծագին է. վասն զի ժամանակ պէտք է կատարելագործելու համար փորձելու և աժան գնով առաջ բերել կարենալու համար. եթէ հարուստներն ի սկզբան այդ նոր բերքերուն բարձր գին չիտային՝ ոչ ոք կրնար շինել զանոնք: Արդ ուրեմն հարուստներուն շնորհիւն է որ արուեստական ճարտարութիւնը կը կատարելագործուի. ամենայն ինչ կը շինուի աստիճանաբար աժան գնով, և այն բաներն որ նախ իրենք միայն կրնային ստանալ՝ քիչ ատենէն ամենուն կարողութեանը յարմար գին կ'ունենան: Օրինակի համար՝ մէրիկոսը որուն մէկ մեղրին նախ 25 կամ 30 ֆրանք կը վճարուէր, և առաջին կարգի հարուստները միայն կրնային հագուիլ, հետզհետէ 3 կամ 4 ֆրանքի իջաւ: Ի սկզբան ներկեալ կտաւուց մեղր գլուխ 6 կամ 7 ֆրանք կը վճարուէր և հարուստ կանայք միայն վրանին կը կրէին. հիմա անոնցմէ ինչուան 75 հարիւրորդի (սակոյիւի) ծախուողը կայ:

Իրաւունք ունէի ուրեմն, Միքայէլ, Ըսելու թէ մեծատանց հարըստութիւնը

շահաւոր է աղքատաց և թէ անոնց վերնալը դժբաղդութիւն մը կ'ըլլար բոլոր աշխարհիս համար:

— Կը սկըսիմ հաւատալու, Պ. Տիւբրէ. բայց եթէ աղքատաց մասը չիկրնար շատնալ կտոր մը հարուստներուն ինկած մասէն, ինչպէս ուրեմն իրենց դիրքը կրնայ լաւնալ:

— Այս բանս կրնայ ըլլալ՝ ոչ եթէ մտացածին հաւասարամասն բաժանմամբ մը՝ որ մէկուն տալու համար զմիւսը կողոպտել կ'ըլլար, որով հասարակաց բարեկեցութիւնը կը նուազէր՝ փոխանակ շատնալու. այլ հասարակաց հարըստութեան շատնալովը, որով աղքատաց մասն ալ կը շատնայ և հարուստներուն ալ չիքիշնար:

— Ո՛հ, ասկէ աղէկ բան ո՛վ կ'ուզէ. բայց ինչպէս կ'ըլլայ:

— Ահաւասիկ գլխաւորապէս ինչ որ ձեզի պիտի սորվեցնեմ. բայց նախ և առաջ անհամբերութիւննիդ հանդարտեցնելու համար կ'ըսեմ, որ կրնաք այնմ հասնիլ աւելի կարգ խելք ու կրթութիւն և ճարտարութիւն բանեցնելով ձեր աշխատութեանցը մէջ, և աւելի խելացի կենաց ընթացք մը բռնելով: Կը հասնիմք այս վիճակին ամենքնիս ալ՝ լաւցընելով մեր մշակութիւնը, կատարելագործելով արդիւնաբերութեան միջոցները՝ լաւագոյն և աւելի շատ յառաջ բերելով, վաճառականութիւննիս տարածելով և հաղորդակցութեան ճամբաները բազմացընելով:

— Շատ աղէկ կ'ըլլայ, ըսաւ Մնդրէաս. բայց միայն թէ հարուստները ամեն բան տակն ու վրայ չընեն իրենց անձնասիրութեամբն ու խստասրտութեամբը:

— Դեռ չափազանցօրէն կը խօսիս, Մնդրէաս. հարուստներն ալ մարդիկ են, ուրեմն իրենց պակասութիւններ ունին. և մասնաւորապէս իրենց վիճակին, մեծամտութեանը պակասութիւններն ունին, և երբեմն նաև անտարբեր ըլլալով իրենց անձանօթ եղած աղետից: Բայց եթէ ոմանց մտիկ ընելու ըլլանք՝ հարուստները խստասիրտ անձ.

նառէր մարդիկ են, սիրտ չունին, իրենց բանուորներուն ստակէն կտրելով շահ կ'ընեն, և մանաւանդ թէ դատարկապորտ, զեղիս, անառակ ու ամեն պակասութիւն ունեցող մարդիկ են: Ընդհակառակն աղքատը՝ ըստ իրենց՝ համեստ, մեծահոգի, անշահասէր, աշխատասէր են ու ամենայն առաքինութիւն ունին:

Ես այս բաներու հակառակը չեմ ըսեր. միտքս դրած չեմ թէ հարուստներն ամենքն ալ մարդասէր, մեծահոգի, հաւատարիմ անձինք են ու ամեն կատարելութիւն ունեցող, և թէ գործաւորը առ հասարակ ծոյլ են, ցոյ՜ չուայլ ու ամենայն մասամբ ախտաւոր. այս ըսելը արտաքոյ կարգի անիրաւութիւն կ'ըլլար: Կան աղէկ հարուստներ ալ՝ գէշեր ալ. նոյնպէս աղէկ կամ գէշ աղքատներ. իրենք զիրենք միայն մտածող տէրեր, և այնպիսի գործաւորներ ալ որ ամեննին զիրենք բանեցընողներուն շահը չեն մտածեր: Բայց աս է որ ասոնք ալ՝ անոնք ալ մարդիկ են, և կատարեալ մարդ ամեննին չիկայ, եղեր է հարուստ, եղեր է աղքատ: Հարուստը և աղքատը, տեալը և գործաւորը պարտական են ուրեմն մէկմէկու պակասութեանցը զիջանիլ ու ներողամիտ ըլլալ: Սակայն գործաւորաց ձեռքն է հետգհետէ աւելի անկախ ըլլալ իրենց տէրերէն:

— Ի՞նչպէս կ'ըլլայ այս բանս:

— Աւելի կրթութեամբ ու ճարտարութեամբ ու նախատեսութեամբ: Երբ գործաւորը աւուրչէքի շատ պէտք չունի՝ ստիպուած չ'ըլլար տիրոջը տուածովը գոհ ըլլալու. բնականապէս իր ուժիկը կ'աւելնայ, ինչուան այնչափ որ գործատէրը վնաս կ'ընէ զանիկայ գործածելովը, վնասն զի կանոն չիկայ այս կէտէն անդին անցնելու:

Միանգամայն մեծ քայլ մ'ալ կ'ընէք առ բարեկեցութիւն՝ եթէ առհարատութիւն ալ չ'ըլլայ՝ զոր հարք միայն իրենց որդւոցն համար կրնան փափաքիլ: Ան ատեն՝ հաւատացէք ինծի, շատ գոհ կ'ըլլաք. հարուստներէն ալ աւելի գոհ, վնասն զի գոհութիւնը կը կայանայ

ոչ այնչափ հարստութեան վրայ՝ քան որչափ զայն ստանալու հաճոյից վրայ: Ամեն մէկ քայլ որ այս նպատակաւ կ'ընենք՝ քան զստացումն աւելի վաւժաւուն վայելից պատճառ է: Առաջին անգամ մէկդի դրուած ստակը աւելի հաճոյք կը պատճառէ՝ քան զգիղեալ գուժարներն յետոյ: Ամենայն վաճառականը քեզի պիտի ըսեն եթէ իրենց առաջին շահը ամեն շահերէ աւելի հաճութիւն պատճառած է իրենց: Առաջին կտոր մը երկիրը կամ առաջին տնակը՝ զոր կարող կ'ըլլան գնելու՝ աւելի հաճոյք կը պատճառէ, քան թէ մեծ կալուած մը կամ մեծ տուն մը յետոյ գընեալ: Հարցուցէք մասնաւորապէս Ունորիոսին, Սոթոնին և Տիւրուրին:

— Եւ ոչ որ մէկը մեզմէ հակառակը կրնայ զուրցել, ըսաւ այս վերջինս համարձակաձայն կերպով մը:

Կը շարունակուի:

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Թոքոց շարժւունքը

(Տես էրես 336)

Եւ ՚ի վերայ այսր ամենայնի, այդ ամեն վայրկեանի պաշտպանը, այդ կենացդ հաւատարիմ պահապանը, քու ծառադ է: Դու որ անոր վրայ հոգ ունենաս, ան ալ քու հրամանացդ մտիկ կ'ընէ: Կրնաս զինքը արագ արագ վազցընել, ծանր ծանր վազցընել, կամացդ ուղածին պէս, նաև բոլորովին դադրեցընել, թէ որ ախորժդ մէյմը բռնէ. սակայն ոչ թէ երկայն ժամանակ: Հին ժամանակի ծառան յամառ է իր պարտքերը կատարելուն մէջ: Պզտի բաներու մէջ քեզի կը զիջանի. սակայն մի փոր-